

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

MATERIALIEN ZUR ARMENISCHEN PALÄOGRAPHIE

I.

Ein im Auftrage des Königs Leo III. abgeschriebenenes Psalterium
(1283)

Beschrieben von

ՄԱԿԱՏՆ ՀԱԲԵՏՉԻԱՆ

ՆԻԻԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա.

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

ԳՐՈՒԱԾ ԼԵՒՈՆ Գ. ԹԱԳԱԻՈՐԻ ՀԱՄԱՐ (ՁԼԲ = 1283)

ԴՐԵՑ

Հ Ա Յ Կ Ա Ջ Ն Հ Ա Գ Է Ծ Ե Ա Ն

(Արտատպանութիւն ՀԱՆԴԷՄ ԱՄՍՕՐԵԱՅԷ, Թ. 2/3)

Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Գ Ա Ր Ա Ն

1922

091

Հ-33

23 JUN 2009

021-4
Z-33

MATERIALIEN ZUR ARMENISCHEN PALÄOGRAPHIE

I.

Ein im Auftrage des Königs Leo III. abgeschriebenes Psalterium
(1283)

Beschrieben von
HAIKASN HABESCHIAN

ՆԻԻԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԽՍՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա.

ՍԱԳՄՈՍԱՐԱՆ

ԳՐՈՒԱԾ ԼԵՒՈՆ Գ. ԹԱԳԱԻՈՐԻ ՀԱՄԱՐ (ՁԼԲ = 1283)

ԳՐԵՑ

ՀԱՅԿԱԶՆ ՀԱՊԷԾԵԱՆ

(Արտատպուած ՀԱՆՐԷՍ ԱՄՍԹՐԵԱՅԷ, Թ. 2/3)



9265

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

Գ Ր Ո Ւ Ա Ծ Լ Ե Ւ Ո Ն Գ. Թ Ա Գ Ա Խ Ո Ր Ի Հ Ա Մ Ա Ր

(2ԼԲ = 1283)

1920 ին, յունիս 13 ին բարերախտու-
թիւնն ունեցայ ձեռք ձգելու Ատանայի մէջ
Սաղմոսարան մը, որ այժմ զարդերէն մին է
Տիար Ժաք Մաթոսեանի հայերէն ձեռագիրնե-
րու արդէն մեծապէս ճոխ հաւաքածոին:
Մեծարժէք է այն ոչ միայն իւր հնութեամբ
եւ գեղեցիկ մանրանկարներով, այլ եւ սեպ-
հականութիւն եղած ըլլալով հայ արքունի տան՝
Լեւոն Գ. Թագաւորի, որուն համար ալ օրինա-
կուած է 1283 թուին Սիսի մէջ Յովհան-
նէս գրչէն:

Իմ կողմէս առանց մանրամասնութեանց
մէջ մտնել փորձելու, պիտի շատանամ միայն
հայ եւ օտար արուեստասէրներու եւ բանասէր-
ներու ուշադրութեան յանձնել զայն, հայ ա-
րուեստի եւ բանասիրութեան վերաբերեալ
խիստ շահեկան յիշատակարաններու վերար-
տադրութեամբ եւ ինչ ինչ մանրանկարներու
հրատարակութեամբ¹:

1. Նկարագրութիւն ձեռագրին:

ԹՈՒՂԹ.Ք 260: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆՆԵՆ
24 × 16.5 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆՆԵՆ միա-
սին 16.5 × 11 սմ.: — ՏՈՂ.Ք 17—8—
16—20: — ԹԵՐԹ.Ք 26. իւրաքան-
չիւրը 12, տեղ տեղ 10 թուղթ: — ՆԻՒԹ՝
ընտիր մագաղաթ: — ԿԱԶՄ՝ պինդ կա-
շեպատ. թերեւս ԺԸ դարուն: — ՄԱԳԱ-

¹ «Հանդիսի» կամագրութիւնը իւր կտորն շոտ-
հակալութիւնը կը յայտնէ Տիար Ժաք Մաթոսեանի,
որ հաճեցաւ ազնուօրէն յանձն առնուլ պատկերներու
պատրաստութեան ծախքը:

ՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ, այլ թղթեայ՝
որ Սսի կաթողիկոսներու կոնդակի մը
մասը կը կազմէ: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք շատ
լաւ պահուած. կը պակսին սակայն 2 թեր-
թէն Գ թուղթը, որ կամ նկար մ'ըլլալու
էր եւ կամ դատարկ. ինկած են ԻԴ—ԻԷ
թերթերը: — ԳԻՐ՝ բոլորգիր մեծ, մա-
քուր եւ կանոնաւոր: — ԽՈՐԱԳԻՐ.Ք եւ
սկզբնատողը հատուածոց եւ տուններու
սկզբնատառերն՝ կարմրագիր. զարդագիր
ունեցող բոլոր տողերը երկաթագիր են: —
ԶԱՐԴԱԳԻՐ.Ք կարմիր, խիստ յաջող,
շատ յաճախ, մերթ նստեւ մարդագրեր եւ
թռչնագրեր: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴ՝ շատ
ստեպ գրեթէ ամէն էջի վրայ: — ԽՈ-
ՐԱՆ.Ք 8 հատ: — ՆԿԱՐ.Ք 1 հատ: —
ԴԱՏԱՐԿ՝ չկայ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 2ԼԲ =
1283: — ՏԵՂԻՒ ՍԻՍ: — ՏԷՐ՝ Լեւոն Թա-
գաւոր: — ԳՐԻԶ՝ Յոհան: — ՅԻՇԱՏԱ-
ԿԱԳՐՈՒԹԻՒՆ.Ք թղ. 53բ, 54ա, 87ա,
87բ (արքունական ինքնագիր), 176ա,
260բ: — ԲՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ թղ.
259ա—260ա:

2. Բովանդակութիւն:

Մատեան է Սաղմոսարան եւ Ժամագիրք:
Կը սկսի Հաւատով խոստովանիմի «զես ի
չար սովորութեանց իմոց» տողէն: Սաղմոսարանը
բաժնուած է կանոնագրութիւններու, գուրդաներու
եւ տուններու: Մէջ ընդ մէջ ագուցուած են
Ժամագրքի մասերը ըստ պատշաճի: Բացա-

տրութիւնները կարմրագիր են եւ մանր բորբոզիւր: Թղ. 3 ա. կը սկսի. "Երանեալ է": Թղ. 22 ա. Աւրհնութիւն Մովսէսի եւ որդւոցն Իսրայելի. Աւրհնեցո՞ք զՏէր: Թղ. 24 ա. Վասն ի վերուստ խաղաղութեան: Բրիստոս է իմ

Թղ. 246 բ. Հղաւր յաղթող: Ընկալ, Տէր, զաղաչանս: Թղ. 247 ա. Մեծացուցէ անձն իմ: 247 բ. Աւրհնեալ Տէր Աստուած Իսրայելի... Թղ. 255 բ. Կաւարտի Սաղմոնն եւ կը սկսի Փառք ի բարձունս Աստուծոյ...: Հոս կը պակ-



Պատկ. 1.

Աստուած: Տէր տունջեան եւն: Թղ. 82 ա. Աւրհնութիւն Մովսէսի. Զի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ: Թղ. 114 բ. Եւ եւս խաղաղութեան... Գոհանամք զբէն...: Թղ. 146 ա. Ի գիշերաց կանխէ հոգի իմ...: Թղ. 176 ա: Ես ասացի ի վերանալ...: 205 ա. Աւրհնեցէք զԱստուած...: Թղ. 237 բ. Տէր զուր քո լուայ եւ երկայ...: Թղ. 246 ա. Ցաւղեա Տէր...

սին ԻԳ—ԻԸ Թերթերը. իսկ ԻԸ կը սկսի Անձառ տնաւրէնութեամբ:

Չեռագրին ուղղագրութիւնը հին ձեւով է. այդ = այլ, պահէին = պահէին, եին = էին, թե = թէ. առեւծ = առիւծ, ուղեղ = ուղեղ, երկիղած = երկիղած, շաւեղս = շաւիղս. աղեղուեա = ալէրուեա, զըկեանս = զկեանս եւն:

3. Մանրանկարները:

Չեռագիրս ճոխ է մանրանկարներով, լաւ եւս խորաններով, լուսանցազարդերով եւ ջարդագրերով: Իրրեւ ամբողջական նկար հաս

ՄԱՅԻ Ա[ՍՏՈՒԾՈՅ

Յ(ԻՍՈՒ)Ս Ք[ՐԻՍՏՈՅ]

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՊԲ. ՀԱՆԷՍ ԶԱՆՍԵՐՆ

ՔԵԶ ՅԱՆԶՆԻ:



Պատկ. 2.

մը միայն ունիք, ձեռագրին սկիզբը, որ կը ներկայացնէ Աստուածածինը բազմած աթոռի վրայ, եւ գիրկը բռնած Յիսուս մանուկը: Աստուածամօր աջ կողմը ծնրագիր կեցած է աղաչաւորի կերպարանաց տակ Յովհաննէս ջանսըլէր, որ մեզի Սաղմոսարանի համանուն ընդօրինակողին հետ նոյն ըլլալ կ'երեւայ: Նկարիս վրայ կը կարդացուին (Պատկ. 1).

Խորանները՝ թուով 8, զետեղուած 8 կանոնագրութիւններու սկիզբը, կը ներկայացնեն զանազան մոտիւններով տերեւահիւս, խաչածեւ, գիրկընդխառնուող զարդածեւեր, թէեւ պարզ, բայց համաչափ եւ ճաշակաւոր, մանաւանդ իրենց երկնեանց գոյներու մէջ (համտ. Պատկ. 2—7): Լուսանցքներու վրայ, մէն մի խորաններու եզերքը եւ գուրդաններու սկզբնաւորութեան,

տրութիւնները կարմրագիր են եւ մանր բոլոր-
գիր: Թղ. 3 ա. կը սկսի. "Երանեալ է": Թղ.
22 ա. Աւրհնութիւնն Մովսէսի եւ որդւոցն Իսրա-
յեղի. Աւրհնեցոք զՏէր: Թղ. 24 ա. Վասն
ի վերուստ խաղաղութեան: Քրիստոս է իմ

Թղ. 246 բ. Հղաւր յաղթող: Ընկալ, Տէր,
զաղաչանս: Թղ. 247 ա. Մեծացուցէ անձն իմ:
247 բ. Աւրհնեալ Տէր Աստուած Իսրայելի...
Թղ. 255 բ. Կաւարտի Սաղմոնն եւ կը սկսի
Փառք ի բարձունս Աստուծոյ...: Հոս կը պակ-



Պատկ. 1.

Աստուած: Տէր տունջեան եւն: Թղ. 82 ա. Աւր-
հնութիւնն Մովսէսի. Չի հուր բորբոքեցաւ ի
բարկութենէ իմէ: Թղ. 114 բ. Եւ եւս խաղա-
ղութեան... Գոհանամք զքէն...: Թղ. 146 ա.
Ի գիշերաց կանխէ հոգի իմ...: Թղ. 176 ա.
Ես ասացի ի վերանալ...: 205 ա. Աւրհնեցէք
զԱստուած...: Թղ. 237 բ. Տէր զուր քո լուայ
եւ երկայ...: Թղ. 246 ա. Ցաւղեա Տէր...

սին ԻԳ—ԻԸ Թերթերը. իսկ ԻԸ կը սկսի Ան-
ճառ տնաւրէնութեամբ:

Չեռագրին ուղղագրութիւնը հին
ձեւով է. այլ = ալլ, պահեին = պա-
հէին, եին = էին, թե = թէ. առեւծ
= առիւծ, ուղեղ = ուղեղ, երկիղած =
երկիղած, շաւղս = շաւղս. աղեղուեա
= ալէլուիա, զըկեանս = զկեանս եւն:

3. Մանրանկարները:

Չեռագիրս ճոխ է մանրանկարներով, լաւ
եւս խորաններով, լուսանցազարդերով եւ
Չարդագրերով: Իրրեւ ամբողջական նկար հաս

ՄԱՅՐ Ա[ՍՏՈՒԾՈՅ
Յ(ԻՍՈՒ)Ս Ք[ՐԻՍՏՈՅ]

ԱՍՏՈՒԵԾԱԾԻՆ ՊԲ. ՀԱՆԷՍ ՉԱՆՍԱԿԻՆ

ՔԵԶ ՅԱՆՉՆԻ:




Պատկ. 2.

մը միայն ունինք, ձեռագրին սկիզբը, որ կը
ներկայացնէ Աստուածածինը բազմած աթոռի
վրայ, եւ գիրկը բռնած Յիսուս մանուկը: Աս-
տուածամօր աջ կողմը ծնրագիր կեցած է աղա-
չաւորի կերպարանաց տակ Յովհաննէս ջանսը-
լէր, որ մեզի Սաղմոսարանի համանուն ընդօրի-
նակողին հետ նոյն ըլլալ կ'երեւայ: Նկարիս
վրայ կը կարդացուին (Պատկ. 1).

Խորանները թուով 8, զետեղուած 8
կանոնագրութիւններու սկիզբը, կը ներկայացնեն
զանազան մոտիւններով տերեւահիւս, խաչածեւ,
գիրկընդխառնուող զարդածեւեր, թէեւ պարզ,
բայց համաչափ եւ ճաշակաւոր, մանաւանդ իրենց
երկններանգ գոյներու մէջ (համտ. Պատկ. 2—7):
Լուսանցքներու վրայ, մէն մի խորաններու
եզերքը եւ գուրդաններու սկզբնաւորութեան,

տրութիւնները կարմրագիր են եւ մանր բոլոր-
գիր: Թղ. 3 ա. կը սկսի. "Երանեալ է": Թղ.
22 ա. Արհնութիւնն Մովսէսի եւ որդւոցն Իսրա-
յելի. Արհնեցոյք զՏէր: Թղ. 24 ա. Վասն
ի վերուստ խաղաղութեան: Քրիստոս է իմ

Թղ. 246 բ. Հղաւր յաղթող: Ընկալ, Տէր,
զաղաչանս: Թղ. 247 ա. Մեծացուցէ անձն իմ:
247 բ. Արհնեալ Տէր Աստուած Իսրայելի...
Թղ. 255 բ. Կաւարտի Սաղմոն եւ կը սկսի
Փառք ի բարձունս Աստուծոյ...: Հոս կը պակ-



Պատկ. 1.

Աստուած: Տէր տունդեան եւն: Թղ. 82 ա. Ար-
հնութիւնն Մովսէսի. Զի հուր բորբոքեցաւ ի
բարկութենէ իմէ: Թղ. 114 բ. Եւ ես խաղա-
ղութեան... Գոհանալք շքէն...: Թղ. 146 ա.
Ի գիշերաց կանխէ հոգի իմ...: Թղ. 176 ա:
Ես ասացի ի վերանալ...: 205 ա. Արհնեցէք
զԱստուած...: Թղ. 237 բ. Տէր զուրք լուայ
եւ երկայ...: Թղ. 246 ա. Ցաւղեա Տէր...

սին ԻԿ—ԻԸ Թերթերը. իսկ ԻԸ կը սկսի Ան-
ձառ տնաւրէնութեամբ:
Ձեռագրին ուղղագրութիւնը հին
ձեւով է. այդ = այլ, պահեին = պա-
հէին, եին = էին, թե = թէ. առեւծ
= առիւծ, ուղեղ = ուղիղ, երկիղած =
երկիւղած, շաւեղս = շաւիղս. աղեղուիս
= ալէլուիս, զըկեանս = զկեանս եւն:

3. Մանրանկարները:

Ձեռագիրս ճոխ է մանրանկարներով, լաւ
եւս խորաններով, Լուսանցազարդերով եւ
Զարդարերով: Իրրեւ ամբողջական նկար հաստ

ՄԱՅՐ Ա[ՍՏՈՒԾՈՅ]
Յ(ԻՍՈՒ)Ս Ք[ՐԻՍՏՈ]Ս
ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՊԻ. ՀԱՆԷՍ ԶԱՆՍԼԻՐՆ
ՔԵԶ ՅԱՆՉՆԻ:



Պատկ. 2.

մը միայն ունինք, ձեռագրին սկիզբը, որ կը
ներկայացնէ Աստուածածինը բազմած աթոռի
վրայ, եւ գիրկը բռնած Յիսուս մանուկը: Աս-
տուածամօր աջ կողմը ծնրագիր կեցած է աղա-
չաւորի կերպարանաց տակ Յովհաննէս ջանսը-
լէր, որ մեղի Սաղմոսարանի համանուն ընդօրի-
նակողին հետ նոյն ըլլալ կ'երեւայ: Կարիս
վրայ կը կարդացուին (Պատկ. 1).

Խորանները թուով 8, զետեղուած 8
կանոնագրութիւններու սկիզբը, կը ներկայացնեն
զանազան մտաւերներով տերեւահիւս, խաչածեւ,
գիրկընդխառնուող զարդածեւեր, թէեւ պարզ,
բայց համաչափ եւ ճաշակաւոր, մանաւանդ իրենց
երկներանգ գոյներու մէջ (համա. Պատկ. 2—7):
Լուսանցքներու վրայ, մէն մի խորաններու
եղբրքը եւ գուրդաններու սկզբնաւորութեան,

կը տեսնուին լուսանցազարդեր, ոմանք ծաղկաձև կամ ծաղկեփունջ՝ թաղարի մէջէն վերընձուղող, եւ ոմանք ֆլեքնակաց (Պատկ. 2—3): Գարձեալ ուշագրաւ են զարդագրերը, իրենց պէսպէս ձևերով, մերթ թռչնա.

է յանձնարարութեամբ Ղեւոն Գ. Թագաւորի (1270—1289)՝ անոր անձնական գործածութեան համար:

Այս գեղեցիկ գրաւական մըն է Վիլիկեան արքունիքի ներքին կեանքին, ուր կրօնական եւ




Պատկ. 3.

ձեւ, մերթ ձկնակերպ եւ յաճախ մարդաղէմ (Պատկ. 8):


4. Յիշատակարաններ:

Հետաքրքրական է ձեռագիրս նաեւ իւր յիշատակարաններով: Գլխաւոր յիշատակարանը կը յայտնէ մեզի, թէ ձեռագիրս գրուած


ընթերցասէր ոգին կ'իշխէ գործնականապէս: Ինչպէս թագաւորն Ղեւոն իւր բարեպաշտ աստուածաբունութեան գոհացում տալու համար կը փափաքի ունենալ սաղմոսանուագ մարգարէին երգարանը, նոյնպէս իւր աստուածասէր Տիկինն՝ Վեռան թագուհին, նոյն զգածմամբ իրեն համար օրինակել կու տայ նոյն 1283 տարին Սկեւոյի մէջ Ստեփանոս քահանային նկարազարդ Աւե-




Պատկ. 4.



Պատկ. 5.



Պատկ. 6.



Պատկ. 7.

տարան մը, որ կը գտնուի Գանձակի Ս. Յովհանէս Եկեղեցւոյ մէջ. հոս կ'ըսուի ի մէջ այլոց. «Գերապատուեալս իշխանութեամբ ի բարի արմատոյ մեծափառ թագուհին Հայոց Կեռան. դուստր իշխանաց իշխանին Հեթում Սերաստաւսի, որոյ զերկիղն աստուածային յինքն ամփոփեալ զգլուխ եւ զսկիզբն ամենայն իմաստութեան եւ ըստ ամենայն բարեգործութեան իւրոյ խորհուրդ բարի ի միտ արկեալ ետ գրել զքառավտակ սուրբ աւետարանս ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց... յիշեալիք զստացաւ զսորին զըարեպաշտ թագուհին Կեռան հանդերձ սուրբ թագաւորան Լեւոնիւ...»։ Այսպէս թագաւոր եւ թագուհի նոյն տարին արքունիքի համար ընդօրինակել կու տան կրօնական երկու կարեւոր մատենաներ։

Առանձին կարեւորութիւն կը ստանան նաեւ միւս երկու յիշատակարանները. մին գրուած 1163 ին կը հաղորդէ Ռուբինեան թագաւորութեան առաջին շրջանին վերաբերեալ կարեւոր նորութիւններ. իսկ երկրորդը 1307, Նոյ. 17 ին Անարզաբայի մէջ հայ արքունական տան եւ ազնուականներուն դէմ նիւթուած դաւադիր սպանութեան արձագանգն է, արձանագրուած, ինչպէս կը տեսնուի, ժամանակակից արքունի դիւանագրէ մը։ Այս յիշատակագրութիւնը յառաջ կը բերենք լուսատպութեամբ, ճաշակ մը տալու համար դիւանական գրչութեան։ Այս գրով են ժամանակի արքունի հրովարտակներու պատճէնները։

1. Թ. 259ա — 260ա. Բռն յիշարհութեանը. «Աստուածատունկս այս հոգեզուարճ դրախտ ցանկալի. եւ բուրաստան բաղմաբեղուն բարեաց բաղձալի, յոգնազան տնկովք տենչալի քաղցրաճաշակ պրտովք ըղձալի։ Ծաղկովք բաղմափայլ եւ անձորելի. գեղով գերահարաչ եւ յոյժ անձկալի։ Գեղ բըժշկարար հոգւոց խաթուածի. անկեալ բարբառով բանի մարգարէին Գաւթի։ Աստուածային այգոյն արթուն եւ աննիրհելի տնկագործողի։

1. Հրո. Գաղբերունի. Ճանապարհորդական յիշատակարան. Արձագանք, 1886, էջ 278-279; Բարեուգարեանց Արցախ, էջ 39-40։

Այս սաղմոս յոգնակար երանգովք գունազարդ գեղոյ. տիրական պատկերին եւ մեզ կերպագրող. զոր հոգւոյն սրբոյ ամենիմաստ կոչի։ Թացեալ զեզու գործարան բանի մարգարէին Գաւթի. գրեալ ձեռնն արագաշարժ գպրի զԵկեղեցիին քան զամենայն որդւոցս Արամա գործ սքանչելեաց եւ զարմանալի։

Այս բարբառ մարգարէական բանի, երգեալ Եւթնաղեալ ձայնիւք քնարի. եւ տասնաղեալ սաղմոսարանի. զԵւթնարկեան շնորհս հոգւոյն՝ ի զգայականս մեր. տասնոց մասունս խորհրդածողի։ Յորոց յարմարական ձայնից հնչողի. ստեղծողն էից ի բանականացս բարեբանի։

Այս ամենունակ բարեաց գանձարանի սիրեցող եղեալ բարեպաշտ եւ աստուածասէր արքայն Հայոց, թագաւորն Լէոն պայազատ եւ ժառանգաւոր թագի թագաւորութեանս Հայկազան զարմի։ Սերեալ ծնընդեամբ յՌորինէ իշխանէ որ յաղականութենէ Բագրատունի եւ ի տանէ եւ ի տոհմէ Արծրունի։

Որոյ հրամանաւ գրեցաւ երգ սաղմոսացս Գաւթի, ի զարդ եկեղեցւոյ եւ ի վարժուսման մանկանց նորոյս Սիողի։ Եւ իւր իսկ բաղձանս ունեւով երգել սովաւ եւ սաղմոսել եւ խաւսել ընդ Աստուծոյ անգաղապէս։ Եւ մնալ նմա յիշատակ բարեաց սպագայ ժամանակի։


Գրեցաւ սայ ի թուականիս Հայոց ՁԱԲ ի թագաւորանիստ մայրաքաղաքն ի Սիս։

Արդ որք աւագիք ի սմանէ յիշեալիք զամենաբարեաց արժանաւոր թագաւորն Հայոց

ՂԼԵՈՆ ԵՒ ՂՆԱԽՆԻՍ ԻՒՐ։ Եւ յիշողացք յիշեցելոցն ողորմացի ֆրիստոս Աստուած մեր յոյսն արարածոց որ է աւրնեալ ընդ Հաւր եւ Հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Տաբէր Իրււլ. Յիշեցէք եւ ընդ նմին դաստուածասէր եւ զբարեպաշտ պրն զԱւշին պարոն Թարոսնց եւ զձն՝ իւր զհայրն իւր Ստեփաննոս եւ զմայրն իւր եւ թողութիւն մեղաց հայցեցէք ի ֆրիստոսէ իւր եւ ծնողաց իւրոց, եւ որ յիշէ ինքն լիցի առաջի ֆրիստոսի Աստուածոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Ով դագք քահանայից որք հանդիպք սուրբ սաղմոսիս առ ի Գաւթի երգարանիս, զպարգեւողն Սաղմոսիս։ Հայոց ազգիս թագաւորին։ Լեւոն չորրորդ որդի Աւշին սուրբ եւ բնաբեալ թագաւորին։ Ձսա արդ յիշել առ ի բարին եւ իւր մեղացն թողութիւն. նաեւ ծնաւղացն եւ իւր զարմին։ Հանգ-



Պատկ. 8.

1. Համեմատէ իսկապէրը Պատկ. 9։

շել է գող նահապետին Աբրահամու յարքայու-
թիւն, եւ որ յիշեքք յիշեալ լեցիք յարքայու-
թեանն Քրիստոսի:

2. Թղ. 167ա. Չմեղապարտ Յոհանն յիշեա
նով ընթերցողք:

3. Թղ. 178բ. Աղաչեմ յիշել զՀանէս եւ
որդին իւր:

4. Թղ. 260բ. Օրոր էրէ: Խուր-ցոյց-Վ
նալի-ընթեանի: Աղաչեմ զամենեան... զոր ետ
գրեմ... վասն... եւ զծառայս Հանէս... զոր վասն
ինդրոյ... ետ... ինձ բարի պրն. իմ գորդիսն
զկոտորնդէն... զհանդերձ... (ընդամենն 20 տող):

5. Թղ. 54ա-54բ. Չեռագրին ժամանա-
կակից թուող գրով կայ հետեւեալը. հաւանորէն
գաղափար ձեռագրին յիշատակարանէն.

Չայս բան գրեցար մեր ի թուական.
Ի վեց հարիւր ու երեքտասան (1163):
Ի յանբարի ժամ տրտմական.
Ձե քրիստոնեայք իսպառ անգան:
Անտիրքու զաւրքըն հարան.
Ի զաւրագլուխըն բմբունեցան:
Եւ յաւգոտոնս երեքտասան,
Չորեքշաբթ աւր տրխրական:
Վասն մեղաց որ բաղմացան.
Բարեբարին կամք բարկացան:
Անաւրինացըն մատնեցան.
Ձե յաւրինաց նորա դարձան:
Բայց աջն Հաւր պահպանական.
Պահեաց զիշխանըն հայկական:
ՉԹորոս անուն յոյժ վեհական.
Ազգաւ սերեալ ընաւրինեան:
Շնորհեաց մեզ ձիր պարգեւական.
Եւ աշխարհի իւր սեփական:
Լուաւ զձայն աղաւթական,
Որ ի բնաւիցրս մատուցան:
Որպէս մանգունքըն Բաբելոնեան.
Ապրեալ հայցմամբ Գանիէլեան:
Կամ մարգարէն մծըն Յունան.
Յորովայնէ փրկեալ ձրկան:
Արդ գուգնաքեա գրեալ այս բան.
Յերկիր սորին գող տիրական:
Ի կատաղան ուխտ սրբական,
Յիւրոց նախնեացըն դամբարան:
Մինչ ճանապարհ մեզ ուղղեցան,
Գալ ի կայէն հըռովմայական:
Ի տեսութիւն իւր բղձական,

Պատուասիրեալ սիրոյ բաղձման:
Որում հայցեմք պարագայց ամ.
Գերալըրապէս անդրաւական:
Անճառաւք մինչ ի վախճան,
Յաղթեւ ի սպան որք ներհական:
Սիրել զբարին աստուածական.
Ատել զչարքն դիւական:
Ձե անդ բարեացն, որ խոտացան.
Արժանասցի միշտ յաւիտեան: Ամէն:

Սիրոյ երկեղիւ նպաստ լիք նըւաստիս:
Ապրիւ Հոգւով ողորմելոյս յանշէջ հրոյն: Ամէն:

6. Թղ. 87բ. Հոս ամբողջապէս կը ներ-
կայացնեմ լուսանկարը սոյն կարեւոր յիշատակա-
րանին (Պատկ. 10) որ Անարգաբայի մէջ պատա-
հած արքունի աղէտը կը պատմէ: Թերեւս զայն
գրեց արքունի ձեռք մը եւ կամ հայ արքունիքի
ղիւանապետը:

7. Թղ. 25բ. Նօր-էրէ. «Միքայէլն ծնա-
ի թուին հայոց ՌՄԹԱին ի ամենանն մայիսիւ
ԺԳին»:

8. Թղ. 53բ. Նօր-էրէ. «Ի թուին ՌՄԼԳ
եւ փե տեր իԱ օրն, որ էր պատկեր աւուրն սրբոյն
Թէոդորոսի զնաւորին. աւրնկալայ զկարք քա-
հանայութեան. ես տեսացս Եղբորդի Տեառն
Եփրեմի սրբէասարաս եւ քրորէաքատակ Վաթո-
ղիկոսի, ի վաղջանումն հօրեղբօրն իմոյ, եւ իւր
էմնուծայի որդւոյն Տեառն Թէոդորոսի գերեթա-
նիկ եւ սրբակրօն Վաթողիկոսէ:

9. Թղ. 87ա. Նօր-էրէ. «Յերկրորդում
աւուր ծննդեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի
Քրիստոսի, որ էր օր մեռելոց, եւ պատկեր աւուրն
Երկուշաբթի, յԵՕԹներորդում ժամու գիշերոյն՝
խառնեցաւ ընդ նախափախճանեցոցն եւ հայրն իմ
Ժերունի Տէր Մարկոս Աջապահ եւ մաքրանունդ
քահանայ, իններորդ Աջապահ առ ի Յօհաննէս
Եպիսկոպոսէ եղբօր բարեպաշտ արքային Հեթմոյ
երկրորդի՝ որդւոյ Լէօնի երրորդի. էր սա անձնեայ՝
փառամարտու եւ գեղեցկազէմ, երաժիշտ եւ ձայ-
նաւոր. սա՛ շորեքտասան անգամ գնալ ի կոստանդ-
նուպօլիս յանձն էառ սակս սրբոյ Աթոռոյն գոր-
ծոյ: Այդ Հէ ամեայ վախճանեցաւ ի թուին հայոց
ՌՄԻԸ, եւ Յունուարի է: Ի քառաներորդի
երկրորդի ամի քահանայութեան իւրում:

Աղեքսանդրիա, 5 Յունուար 1922:

2197
38



17049

MECHITHARISTEN-BUCHDRUCKEREI, WIEN, VII.